

ԼԻԼԻԹ ԱԶԱՏՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս



«ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ

Փողերի լվացումը հանցագործության յուրահատուկ տեսակ է: Ի տարբերություն այլ հանցագործությունների, փողերի լվացման առանձնահատկությունն ան է, որ առաջին հայացքից թվում է, թե կատարվում են օրենքով թույլատրելի գործողություններ, սակայն իրականում հանցագործը ձեռնարկում է թաքցնել իր եկամուտների անօրինական ծագումը: Այս է պատճառը, որ հասարակության համար երբեմն անհասկանալի է մնում այն հանգամանքը, թե ինչու է կայանում փողերի լվացման իրական վտանգը, ով է հանդիսանում տուժող, և հետևաբար, ինչի համար է հարկավոր փողերի լվացումը ճանաչել որպես հանցագործություն: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման կործանարար հետևանքները ակնհայտ կերպով ցուցադրելու դժվարությունը հիմք է տալիս տատանվելու այդ արարքը քրեականացնելու հարցում: Դա է պատճառը, որ մի շարք երկրների օրենսդրությամբ փողերի լվացումը չի համարվում հանցագործություն: Չնայած դրան, այն պետությունները, որոնք ունեն կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մեծ փորձ, արդեն գիտակցել են, որ այդ աղետալի երևույթի հետ պայքարելու ամենարդյունավետ միջոցը կազմակերպված խմբերին զրկելն է այն հանցավոր եկամուտից, որը նրանք ցանկանում են ներդնել օրինական տնտեսության մեջ կամ օգտագործում են քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար, որպեսզի լայնացնեն իրենց ապօրինի բիզնեսի ծավալները:

Ուշագրավ է այն փաստը, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման ոլորտում միջազգային օրենսդրության հիմք են հանդիսացել ներպետական իրավունքի նորմերը: Առաջին օրենքները, որոնք ուղղված էին հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացմանը, մշակվել և ընդունվել են ԱՄՆ-ում¹:

Փողերի լվացման դեմ պայքարը միջազգա-

յին հանրության կողմից ընդունվում է, որպես կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնական տարրերից մեկը: Միջազգային համագործակցությունը այդ ոլորտում զարգանում է երկու հիմնական ուղղություններով՝ երկկողմանի և բազմակողմանի միջազգային պայմանագրերի կրճատմամբ (կոնվենցիոն համագործակցություն) և համագործակցություն միջազգային կոնֆերանսների շրջանակներում (ինստիտուցիոնալ համագործակցություն): Զարգացած պետությունների մեծ մասը հանդիսանում են հիմնարար միջազգային կոնվենցիաների մասնակից, ինչպես նաև նրանք համագործակցում են միջազգային կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցության շրջանակներում:

1988թ. նոյեմբերի 10-ին Վիեննայում ընդունվեց ՄԱԿ-ի «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» Կոնվենցիան, որը ունիվերսալ բնույթի միջազգային իրավական ակտ է: Նրանում առաջին անգամ հռչակվեց փողերի լվացման և թմրամիջոցների միջազգային անօրինական շրջանառության կապը, որը թույլ է տալիս հանցավոր խմբերին ներգործել յուրաքանչյուր պետության քաղաքականության և տնտեսության մեջ:

Կոնվենցիան առաջարկում է իր մասնակիցներին, որոնց թվում 2004թ. նաև Հայաստանն է, քրեական պատասխանատվություն նախատեսել հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների իրավական ծագումը խեղաթյուրելու համար և կանխարգելել օրինական տնտեսության մեջ հանցավոր եկամուտների ներդնումը: Կոնվենցիայի կարևոր նորամուծություններից են այն առաջարկությունները, որոնք ուղղված են բանկային գաղտնիքի սահմանափակմանը, այն դեպքերում, երբ դա խոչընդոտում է քրեական հետաքննությանը:

1990թ. նոյեմբերի 8-ին Ստրասբուրգում ընդունվեց Եվրախորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետա-

www.moj.am

խուզման, առգրավման և բռնագրավման մասին» Կոնվենցիան: Իր դրույթներում Կոնվենցիան զարգացնում է 1988թ. ՄԱԿ-ի Վիեննայի Կոնվենցիայի փողերի լվացման դեմ պայքարի նորմերը՝ առաջին հերթին ընդլայնելով հիմնական իրավաստատումների շրջանակները, որոնք հանդիսացել են անօրինական եկամուտների աղբյուր²: Բացի այդ, Կոնվենցիան մանրամասնորեն սահմանում է միջազգային համագործակցության և փոխօգնության, փողերի լվացման հետ կապված հանցագործությունների քննության և անօրինական եկամուտների բռնագանձման սկզբունքներն ու կարգը: Ստրասբուրգյան Կոնվենցիայի ընդունմամբ սկսվում է փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում մասնագիտացված միջազգային օրենսդրության ձևավորումը: 2001թ.-ից Կոնվենցիայի մասնակից է հանդիսանում Ռուսաստանի Դաշնությունը, իսկ 2004թ.-ից՝ նաև Հայաստանի Հանրապետությունը:

Ստրասբուրգյան Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված է, որ կոնվենցիային միացող պետությունը կարող է հայտարարությամբ հայտնել, թե որ կատեգորիաների հանցագործություններն են դիտվում որպես հիմնական հանցագործություններ:

Կոնվենցիային միացած պետությունները ցուցաբերել են տարբեր մոտեցումներ հիմնական հանցագործությունների ցանկը և կատեգորիաները որոշելու հարցում: Առանձին պետություններ հիմնական հանցագործություններ դիտվող արարքների վերաբերյալ որևէ հայտարարություն չեն արել: Դա նշանակում է, որ ցանկացած հանցագործությունից ստացված եկամուտի օրինականացումը հանցավոր է: Ռուսաստանի Դաշնության հայտարարության համաձայն, օրինակ, փողերի լվացում է դիտվում ակնհայտ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների լեգալիզացիան, բացառությամբ ՌԴ քրեական օրենսգրքի 193, 194, 198, 199, 199¹ և 199² հոդվածներով նախատեսված հանցագործությունների³: Պետությունների գերակշռող մասը հայտարարություններում նշել է հանցագործությունների կատեգորիաները, որոնց արդյունքում ստացված եկամուտների օրինականացումը հանցագործություն է: Հայաստանի Հանրապետության հայտարարության համաձայն՝ փողերի լվացում է դիտվում այն հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտը, որը ձեռք է բերվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հանցագործությունների արդյունքում: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 4-րդ կետին վերաբերող հայտարարությունում նաև նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավունք է վերապա-

հում իրեն հետագայում ավելացնել կամ պակասեցնել հանցագործությունների կատեգորիաները:

Կոնվենցիայի «Ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցներ» վերնագրով 2-րդ գլխում սահմանվել են այն նվազագույն չափանիշները, որոնք Կոնվենցիային միանալու դեպքում վերածվում են պարտավորության: Չափանիշները միաժամանակ կատարում են իրավական կարգավորման մեխանիզմի դեր: Կոնվենցիային միացող պետությունների համար առաջին հերթին կարևորվում են օրենսդրության համապատասխանեցման խնդիրները, որոնք ներառում են քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, տնտեսական և վարչական օրենսդրության վերանայումը:

Կոնվենցիային միացող պետությունները, մասնավորապես, պարտավոր են սահմանել՝

- հանցավոր եկմուտների օրինականացման այնպիսի հասկացություն, որը ներդաշնակ է Կոնվենցիայի 6-րդ հոդվածում ներառված հասկացությանը,

- բռնագրավմանը վերաբերող այնպիսի մեխանիզմներ, որոնք պետությանը հնարավորություն կընձեռեն բռնագրավել հանցագործության գործիքները և եկամուտները կամ եկամուտներին համապատասխանող արժեք ունեցող սեփականությունը,

- բռնագրավման ենթակա գույքի նույնացման ու հայտնաբերման և այդպիսի գույքի հետ կապված ցանկացած փոխակերպման կանխարգելման մեխանիզմները,

- նախաքննության հատուկ լիազորություններ և միջոցներ, որոնք կնպաստեն համապատասխան ապացույցների հավաքմանը: Դրանց շարքին են դասվում բանկային հաշիվների վերահսկողությունը, հեռահաղորդակցության դիտարկումը և վերահսկողությունը, մուտքը համակարգչային համակարգեր ու բազմաթիվ այլ միջոցներ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն, հիմք ընդունելով 1990թ. Կոնվենցիայի ուժի ներքո հանցավոր եկամուտների օրինականացման դեմ պայքար մղելու արդյունավետությունը, 2005թ. մայիսի 3-ին ընդունել է երեք միջազգային իրավական փաստաթուղթ, ներառյալ՝ «Հանցավոր գործունեությունից ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագանձման ու ահաբեկչության ֆինանսավորման մասին» Կոնվենցիան, որը բացվել է ստորագրության համար Վարշավայում 2005 թ. մայիսի 16-ին: Այն առաջին փաստաթուղթն է, որը ահաբեկչության ֆինանսավորման և հանցավոր գործունեությունից ձեռք բերված եկամուտների օրինականացման դեմ պայքար-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ընդ որում է որպես միասնական խնդիր⁴ :

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա փողերի լվացման դեմ իրականացվող պայքարի մեխանիզմներ մշակվել են նաև այստեղ: Մասնավորապես, 2004թ. դեկտեմբերի 14-ին ընդունվեց «Հանցավոր ճանապարհով ստացած եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ առաջին օրենքը, որի հիման վրա 2005թ. ստեղծվեց **Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ-ՈՒ)**: ՖԴԿ-ն գործում է Կենտրոնական բանկի կազմում և հանդիսանում է ՀՀ ֆինանսական հետախուզության մարմին: Նրա գործունեության նպատակն է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ներդրումը: ՖԴԿ-ի ջանքերի շնորհիվ 2008թ-ին մշակվել և ընդունվել են «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ նոր օրենքը և դրա հիման վրա շուրջ 15 օրենքներում փոփոխությունները և լրացումները: Այս նոր օրենսդրական հենքը էապես ներդաշնակեցրել է Հայաստանի իրավական համակարգը՝ ոլորտում գործող միջազգային ստանդարտներին:

Եվրոպայի խորհրդի 1991թ. հունիսի 10-ի թիվ 98/308 «Փողերի լվացման համար ֆինանսական համակարգի օգտագործումը կանխելու մասին» Դիրեկտիվը այլ միջազգային կոնվենցիաներից տարբերվում է նրանով, որ Եվրախորհրդի անդամ-պետությունների համար ունի պարտադիր բնույթ: Այն պարունակում է մանրամասն ցուցումներ, որոնք պետությունները պետք է ընդունեն ներպետական մակարդակում՝ փողերի լվացման դեմ պայքարում: Այդ միջոցները ներառում են հետևյալ սկզբունքների օրենսդրական ամրապնդումը.

- ֆինանսական համակարգի միջոցով խոչոր գործարքների գրանցում և հաճախորդի մասին մանրամասն տեղեկության հավաքում,

- խստացնել քրեական պատիժը՝ փողերի լվացման և այդ հանցագործությունում մասնակցելու համար, ապահովել «վազված» սեփականության և դրանից ստացված եկամուտների բռնագանձումը,

- քրեական գործերի քննության ընթացքում բանկային գաղտնիքի մասին օրենքների սահմանափակումը,

- ապահովել պետությունների միջև փողերի լվացման քրեական գործերի քննության վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը:

ԱՊՀ Միջխորհրդարանական Ասամբլեայի կողմից 1998թ. դեկտեմբերի 8-ին հաստատված

«Անօրինական ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) հակադեմոստրացիայի» մոդելային օրենքում նույնպես արտացոլվում է օրենսդրության ունիֆիկացիայի դրական տենդենցը⁶ :

Անդրազգային հանցավորության առավել արդյունավետ կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող համագործակցությանը աջակցելու նպատակով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 2000թ. նոյեմբերի 15-ին Պալերմոյում ընդունեց «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիան: Պալերմոյի Կոնվենցիայում առաջին անգամ սահմանվել են կազմակերպված հանցավոր խմբի, կառուցվածքայնորեն ձևավորված խմբի, անդրազգային հանցագործության և տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպության միջազգային իրավական բնորոշումները, բացի այդ, վերստին պարզաբանվել են մի շարք այլ հասկացություններ, այն է՝ «գույք», «հիմնական իրավախախտում», «կալանք կամ առգրավում», «բռնագրավում», «հանցագործությունից ստացված եկամուտ», առանց որի տարբեր իրավական համակարգեր ունեցող պետություններում դրանց իրավաբանական բովանդակության միասնական մեկնաբանությունն անիրագործելի կլինե՞ր⁷ :

Կոնվենցիայի կիրառման ոլորտն է հանդիսանում հակազդումը հետևյալ հանցավոր արարքների.

- մասնակցությունը կազմակերպված հանցավոր խմբում,
- հանցագործություններից ստացված եկամուտների լվացումը,
- կաշառակերությունը,
- արդարադատության իրականացմանը խոչընդոտելը,

կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետում սահմանված լուրջ հանցագործությունները, եթե այդպիսիք կրում են անդրազգային բնույթ և կատարվել են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ:

Անդրազգային կազմակերպված հանցավորության և անդրազգային բնույթի այլ հանցագործությունների դեմ պայքարը հիմնվում է կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման և միջպետական համագործակցության ընդլայնման անհրաժեշտության վրա, որոնցով պայմանավորվում են միջազգային հանրության համար համընդհանուր վտանգավորություն ներկայացնող արարքների, այդ թվում նաև՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինակա-

նացման, ահաբեկչության ֆինանսավորման քրեականացման, ինչպես նաև այդ արարքների կատարման համար արդյունավետ, համաչափ պատժական քաղաքականության իրականացման վրա⁸ :

Քրեականացման հիմնական սկզբունքների թվում է նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության խնդիրը: Նշենք, որ այդ ինստիտուտը բացակայում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ և 23-րդ հոդվածները ճանաչում են սոսկ մեղսունակ, հանցանքը կատարելու պահին օրենքով սահմանված տարիքի հասած ֆիզիկական անձի իր կատարած հանցանքի համար անձնական քրեական պատասխանատվության սկզբունքը:

Միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրություն ընդունելու բնագավառում, մասնավորապես, Պալերմոյի կոնվենցիայում և այն լրացնող երկու արձանագրություններում մատնանշված արարքները քրեականացնելու ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը իր պարտավորությունները կատարել է: Առանցքային քրեաիրավական հասկացություններ բնորոշած կոնվենցիայի դրույթները իրենց արտացոլում են գտել ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերում: Այսպես, ըստ բնույթի և հանրային վտանգավորության աստիճանի ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված հանցագործությունների դասակարգումը, ինչպես նաև 41-րդ հոդվածում սահմանված կազմակերպված հանցավոր խմբի և հանցավոր համագործակցության հասկացությունների բնորոշումները բխում են Պալերմոյի կոնվենցիայի 2-րդ հոդվածի նորմից:

Հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի համաձայն՝ փողերի վացում է համարվում հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե

այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում): Այս սահմանումը համապատասխանում է Պալերմոյի կոնվենցիայի 6-րդ հոդվածում պարունակվող փողերի վացման հասկացության բնորոշմանը, մինչդեռ քննարկվող քրեաիրավական նորմի նախկին խմբագրությունը՝ «անօրինական ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (լեգալացնելը)» հանգեցնում էր դրա անհիմն լայն մեկնաբանության, քանի որ ոտնձգության անմիջական օբյեկտի և օբյեկտիվ կողմի հասկացությունների բնորոշումների միջև ի հայտ էր եկել ակնհայտ հակասություն⁹ :

Փողերի վացման դեմ պայքարին նվիրված միջազգային-իրավական նորմերի զարգացումը ուսումնասիրելով՝ կարելի է առանձնացնել փողերի վացումը կանխարգելող միջազգային համակարգի զարգացման հետևյալ միտումները՝

- համընդհանուր բնույթի տերմինաբանության և միջազգային իրավական ակտերի տեքստում փողերի վացման հետ կապված հիմնական հասկացությունների մշակում՝ FATF-ի առաջարկությունների հիման վրա օրինական տնտեսության մեջ «կեղտոտ» փողերի ներմուծմանը հակադրելու համակարգի ստեղծում,

- մերձավորեցման ձգտում, իսկ մի շարք դեպքերում, տարբեր իրավական համակարգերի ներպետական օրենսդրության ունիֆիկացիան՝ փողերի վացմանը հակադրելու ուղղությամբ,

- փողերի վացման դեմ պայքարի համար պատասխանատու կենտրոնների ստեղծում և դիտարկված ոլորտում միջազգային համագործակցության արդյունավետ ուղղությունների և գործընթացի մշակում՝ ազգային ֆինանսական և իրավապահ համակարգերի շրջանակում:

Սկզբում ամերիկյան, իսկ հետո միջազգային իրավունքի ազդեցությամբ XX-րդ դարի 90-ական թթ. զարգացած պետությունների մեծ մասում կազմավորվեցին փողերի վացման դեմ պայքարի իրավական համակարգերի հիմքերը և ընդունվեցին հատուկ օրենքներ: Փողերի վացումը որպես հանցագործություն նախատեսվում է գրեթե բոլոր երկրների օրենսդրությամբ: Հարկավոր է նաև նշել, որ մի շարք երկրներում հանցագործություն է համարվում ամեն տեսակի անօրինական գործունեությունից ստացված եկամտի վացումը (օրինակ՝ Ղազախստանը), մյուսներում՝ միայն հանցագործության հետևանքով ձեռք բերված փողերի վացումը (օրինակ՝ Ռուսաստան), իսկ այլ պետություններում փողերի վացումը համարվում է հանցագործություն, միայն եթե դրանք ստացվել են օրենքում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թվարկված հանցագործությունների և իրավախախտումների կատարման հետևանքով¹⁰ :

Այն երկրները, որտեղ այս աղետալի երևույթի դեմ պայքարում են վաղուց, ունեն հարուստ դատական փորձ, պետական մեղադրողների համար հրատարակվում են օրենքի կիրառման առաջարկություններ¹¹ :

Միջազգային օրենսդրության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի այն, որ փողերի լվացումը համարվում է քրեորեն պատժելի արարք, նրա դեմ արդյունավետ պայքարն իրականացվում է այնպիսի միջոցների իրագործմամբ, ինչպիսիք են՝ փողերի լվացման հետ կապված քրեական գործերի քննության ժամանակ բանկային գաղտնիքի սահմանափակում, բռնագանձման սանկցիաների կիրառում, բանկերի կողմից «իմացիր քո հաճախորդին» կանոնի կիրառում:

Ինչ վերաբերում է բանկային գաղտնիքի ապահովմանը, ապա, օրինակ, Մեծ Բրիտանիայի օրենսդրությամբ նախատեսվում է, որ եթե բանկը գործում է բարեխիղճ, ապա նրա դեմ բանկային գաղտնիքի խախտման վերաբերյալ մեղադրանք չի առաջադրվի¹² : FATF-ն (ՖԳ-ՀՀ-ն) նախատեսում է, որ երկրները պետք է հսկեն, որպեսզի ֆինանսական հաստատությունների գաղտնիքի պաշտպանության մասին օրենսդրությունը չխոչընդոտի իր առաջարկությունների կենսագործումը: Դա վկայում է, որ միջազգային հանրությունը ֆինանսական համակարգի պաշտպանությունը հանցագործություններից դատում է ավելին, քան բանկային գաղտնիքի ապահովումը:

Փողերի լվացման դեմ պայքարի նորմերի ներդրումը միջազգային և շատ երկրների ներպետական օրենսդրության մեջ, ինչպես նաև մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների գործունեությունը այս աղետալի երևույթի դեմ պայքարի ուղղությամբ վկայում է այն մասին, որ ամբողջ միջազգային հանրությունը լուրջ մտահոգված է այս հանցագործությանը հակազդելու խնդրով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման ծավալների ընդլայնմանը, ապա այն սերտորեն կապված է հանցավորության աճի կայուն միտումով: Ընդ որում քրեական իրավիճակի վրա ներգործում են կազմակերպված հանցավորությունը և կոռուպցիան, որոնք իրական վտանգ են ներկայացնում պետու-

թյան համար: Արագ տեմպերով աճում է հանցագործների մտավոր մակարդակը: Լայնածավալ անօրինական գործունեությունը տնտեսության տարբեր ոլորտներում ապահովում են կազմակերպված խմբերին հզոր ֆինանսական ռեսուրսներով, որով և իրենց գերակայությունն են ամրապնդում պետության քաղաքականության մեջ: Փողերի լվացման խնդիրը ձեռք է բերել միջազգային բնույթ, քանզի շատ հաճախ անօրինական եկամուտները փոխանցվում են արտասահման՝ այնտեղ օրինականացնելու նպատակով: Փողերի լվացման լայն ոլորտ է հանդիսանում պետական ունեցվածքի մասնավորեցումը, քանի որ դա հնարավորություն է տալիս հանցագործներին օգտագործել այդ ունեցվածքն իրենց շահերի համար:

Փողերի լվացման տարածումը շատ դեպքերում պայմանավորված է հասարակության ցածր իրավագիտակցության մակարդակով: Կազմակերպված հանցավորության դեբր հետզհետե ուժեղանում է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, սպորտը և այլն:

Բարդություններ են հաճախ առաջանում փողերի լվացման հետ կապված գործերի որակման և քննության ժամանակ: Այդ խնդիրների շարքին են դասվում օրինակ՝

- ՀՀ-ում դատական և քննչական փորձի պակասը,
- օպերատիվ աշխատողների, քննիչների, դատախազների մոտ տվյալ ոլորտում մասնագիտական փորձի պակասը,
- հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների վերադարձման արդյունավետ մեխանիզմների պակասը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի ընդունումից և մի շարք միջազգային պայմանագրեր վավերացնելուց հետո զգալի առաջընթաց է նկատվել այս բնագավառում: Մասնավորապես, ՀՀ-ի քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում ներկայիս սահմանումը կարելի է ասել համապատասխանում է այդ հանցագործության միջազգային սահմանմանը: Բացի այդ, զգալի առաջընթաց է նկատվում ՀՀ օրենսդրությունը տվյալ ոլորտում միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քրեական օրենսգիրք // «Պաշտոնական տեղեկագիր».-Եր., 2009, էջ 179:
2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք.
3. «Թմրամիջոցների և հոգեմեդիկամենտիկայի նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիա, Վիեննա 1988թ.:
4. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Կոնվենցիա, Ստրասբուրգ 1990թ.:
5. «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի Կոնվենցիա,Պալերմո 2000թ.:
6. Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (տեսական մեկնաբանություններով), Ժողովածու.- Եր.: Ասողիկ, 2005թ., 410 էջ:
7. Բոշնալյան Ա. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողի լվացման) հիմնախնդիրը և պայքարը դրա դեմ: Մաս առաջին. Եր.:Ասողիկ, 2003թ., 175էջ:
8. FATF 40 առաջարկությունները // Փողերի լվացման դեմ պայքարի արդյունավետ ծրագրերի մշակումը.Ժողովածու.- Եր.,2001թ.
9. Панов В.П. Международное уголовное право. М.: ИНФРА-М, 1997. – 450с.
10. Алешин К.Н. Легализация (отмывание) доходов, полученных преступным путем, как преступление международного характера. СПб. Центр-Пресс, 2004. С. 432.
11. Кисилев И.А. Грязные деньги: Уголовная ответственность за отмывание преступных доходов и ее применение в борьбе с коррупцией. М., 2009. С. 152.
12. Дьяков С.В. Борьба с организованной преступностью в аспекте международного сотрудничества. Организованная преступность - 4/ Под. ред. А.И Долговой. М., 8.-367 С.
13. Кернер Х.Х., Дах Э. Отмывание денег. М. Международные отношения, 1996. С. 432.
14. Якимов О.Ю. Легализация доходов, приобретенных преступным путем. Юридический Центр-Пресс, 2005. С. 262
15. Лопашенко Н.А. Преступления в сфере экономики. М.: Волтерс лувер, 2006.-720с.
16. Волевозд А.Г., Соловьева А.Б. Международный розыск, арест, конфискация и передача иностранным государствам денежных средств и имущества, полученных преступным путем. А также вещественных доказательств по уголовным делам.-М.: Юрлитинформ, 2007.-440с.
17. Anti-Money Laundering Act of 1992. Washington,1993.
18. William C. Gilmore. Dirty money, third edition, Council of Europe,2004.
19. Money Laundering Federal Prosecution Manual. Chapter three. Washington,1994.
20. Council Directive 91/308 EEC of 10 June on prevention of the financial system for the purpose of money laundering Official Journal L 166,28/06/1991, R,0077-0082.

¹ Տե՛ս Պանով В.П. Международное уголовное право. М., ИНФРА-М, 1997. С. 305; Anti-Money Laundering Act of 1992. Washington, 1993.

² Տե՛ս «Грязные» деньги и закон. Правовые основы борьбы с легализацией преступных доходов: Сборник материалов.- М., 1994. С. 135.

³ Տե՛ս Դրանք են՝ արտարժույթով միջոցները արտասահմանից ձվերադարձները,կազմակերպությունից կամ ֆիզիկական անձից զանձվող մարսային վճարները վճարելուց խուսափելը, ֆիզիկական անձի կողմից հարկերը և (կամ) վճարները վճարելուց խուսափելը, կազմակերպությունից հարկերը և (կամ) վճարները վճարելուց խուսափելը, հարկային գործակալի պարտականությունները չկատարելը, կազմակերպության կամ անհատ ձեռներեցի այն դրամական միջոցների կամ գույքի քաբցները, որոնց հաշվին պետք է կատարվի հարկերի և (կամ) վճարների զանձումը:

⁴ Տե՛ս Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (տեսական մեկնաբանություններով). Ժողովածու.- Եր.,2005, էջ 115:

⁵ Տե՛ս Council Directive91/308 EEC of 10 June on prevention of the financial system for the purpose of money laundering Official Journal L 166,28/06/1991, R, 0077-0082.

⁶ Տե՛ս Дьяков С.В. Борьба с организованной преступностью в аспекте международного сотрудничества. Организованная преступность -4 / Под. ред. А.И Долговой.- М.: Криминологическая ассоциация, 1998. С. 216:

⁷ Տե՛ս William C. Gilmore. Dirty money, third edition, Council of Europe, 2004, p. 65-71.

⁸ Տե՛ս Բոշնալյան Ա. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (փողի լվացման) հիմնախնդիրը և պայքարը դրա դեմ: Մաս առաջին.- Եր.: Ասողիկ, 2003, էջ 29-38:

⁹ Տե՛ս Երենյան Ա.Վ., Բոշնալյան Ա. Հանցավոր եկամուտների օրինականացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր (ժողովածու, տեսական մեկնաբանություններով). Երևան, 2006, էջ 263-265:

¹⁰ Տե՛ս Money Laundering Federal Prosecution Manual. Chapter three. Washington, 1994.

¹¹ Տե՛ս Кернер Х.Х., Дах Э. Отмывание денег. М.; Международные отношения, 1996. С. 30-31.

¹² Տե՛ս Кисилев И.А. Грязные деньги: Уголовная ответственность за отмывание преступных доходов и ее применение в борьбе с коррупцией. М., 2009. С. 27.